երբեմնահարուածոց դիպուածոց փայտատաց եւ մրճից անհոգանայր, յուսամք զի քեւ զմատանց ելանելեացն ի վեր քայքայլեցուցեր եւ զմիակողմանն սիւն քանդեալ խորտակեցեր, զի լուցկի լիցի ի յետղւոջ իւրում որ է գեհեանն։ Պատառեցեր զգործին որսոց, զոր ժողովեալ ժամէր զպարզամտացն միտս ի գայթակղութիւն։ Փլեալ խցեր զդարանայետղն, որ նստեալ վարանէր յափշտակել զաղքատն եւ ձգել զնա։ Այրեցեր զբունացելոջն, որ կլանել կամէր զանմեղս եւ ծծել զարիւնս ամբծից։ Մանրեցեր զժանիս նորա, որ կամէր կրծել զոսկերս մեռելոց եւ կենդանեաց։ Ինանզի ո՛վ ոք զհաստատումն նորա կամիցի՝ աստուածամարտիցէ արդեօք. ո՞չ ապաքէն Որդին Աստուծոյ եկն աշխարհ քակել զդժոխս, քանի՛ եւս պարտիմք որդիք մարդկան ջանալ ի քանդումն նորա ըստ կարեաց։ Ահա՛ աստանօր նմանեցեր Որդւոյն Աստուծոյ, եւ զի ինքն երանեաց եւ յինքն նմանեցոյց զխաղաղարարն։ Իսկ ուր դժոխք է՝ անդ է եւ համայնք նիւթք չարչարանաց զի կոչի եւ տանջանարան իսկ, աղաղակաւ եւ հեծեծանօք, վայիւ եւ եղկութեամբ, վրդովմամբ եւ խռովութեամբ, ի քարշելն վիշապին զերբորդ մասն աստեղաց, որ գեհեանն ոչ չիջանի եւ որդն ոչ մեռանի, եւ հաւանեցեալ քարշեցելոցն է անդ լալ աչաց եւ կրճել ատամանց։

Արդ՝ զմերս չնորհակալութիւնս առ քեզ օրհնաբանականս ո՞րպէս կարիցուք ի բաւականութիւն առ ի ընծայումն, քանզի եթէ մեք լռեսցուք՝ ահա՛ տնկեցան որպէս զարձանս թագաւորաց, երեւեցան որպէս զքաղաք որ ի վերայ լերին աղաղակին ի քարանց ի յօրհնութիւն քեզ նարդենիս հասեալ գործոյդ։ Եւ գոհաբանականս ի մէնջ ըստ նարդեանս, որով նմանութեամբ որպէս ոմն որ ազատեալ ի բաց լպրծիցէ ի ժանեաց վիշապէ եւ անդնդային դժոխոց, զի ամենայն